ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՑԱՆՑ

ARMENIAN PUBLIC
ENVIRONMENTAL
INFORMATION AARHUS CENTERS
NETWORK

Web: www.aarhus.am , mob: 077 76 46 41

*29-ը մայիսի 2015թ.*

ՀՀ Բնապահպանության նախարար
պարոն Ա. Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

2015թ. մարտի 31-ին հրապարակվել է «2014թ.-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցը: Տվյալ զեկույցի II բաժնի 2.6 ենթաբաժնում(168-179 էջեր) և VI բաժնի 6.7 ենթաբաժնում (395-402 էջեր) ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առկա բացթողումների ու թերությունների վերաբերյալ բազմաթիվ մեկնաբանություններ, որտեղ ներկայացվում է, որ ոլորտի օրենսդրությունը և կառավարման ներկա իրավիճակը հակասում են Հայաստանի միջազգային պարտավորություններին և խոչընդոտում շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանության գործընթացը երկրում:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները խնդրում եմ Հայաստանի Օրհուս կենտրոնների ցանցին տրամադրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2014թ. տարեկան զեկույցի վերոհիշյալ բաժիններում ներկայացվածի վերաբերյալ ՀՀ ԲՆ-ի պաշտոնական դիրքորոշումը, կարծիքն ու պարզաբանումները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Հայաստանի Օրհուս կենտրոնների համակարգողներ

| | |
|---|---|
| Ալավերդու Օրհուս կենտրոն<br>Անուշ Էվոյան | |
| Ապարանի Օրհուս կենտրոն<br>Նատալյա Մանուկյան | |

| | |
|---|---|
| Գավառի Օրհուս կենտրոն<br>Լիաննա Առոյան<br>Մարինե Մազմանյան | |
| Գյումրու Օրհուս կենտրոն<br>Գեորգ Պետրոսյան | |
| Դիլիջանի Օրհուս կենտրոն<br>Ալբերտ Հարոյան | |
| Եղեգնաձորի Օրհուս կենտրոն<br>Նարեկ Բեգլարյան | |
| Իջևանի Օրհուս կենտրոն<br>Դավիթ Ղազարյան | |
| Եղվարդի Օրհուս կենտրոն<br>Ռուզաննա Մանյան<br>Անուշ Բեյբության | |
| Կապանի Օրհուս կենտրոն<br>Աշոտ Ավագյան | |
| Հրազդանի Օրհուս կենտրոն<br>Անահիտ Մնացականյան<br>Ժորա Առաքելյան | |
| Ստեփանավանի Օրհուս կենտրոն<br>Մանյա Մելիքջանյան | |
| Վանաձորի Օրհուս կենտրոն<br>Պերճ Բոշուկյան | |
| Արարատի Օրհուս կենտրոն<br>Հռիփսիմե Սարգսյան | |
| Օրհուս կենտրոնների տեղեկատվության պատասխանատու<br>Մարի Չաքրյան | |